

82 Մ

Տ-90

ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ Ն. ԱՂԱՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ N 1


ՄԱՐԿ ՏՎԷՆ

# Վ Ի Ճ Ա Կ


Թարգմանեց

Օր. Ն. Ազանեան

60



ԲՅՏԻԵՐ



30 MAY 2017

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ե. ԱՂԱՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

82.5  
5-90

---

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
№ 2


այ.

ՄԱՐԿ ՏՎԵՆ

≡ Վ Ի Ճ Ա Կ ≡

Թարգմանեց  
Օր. Նուարդ Աղանեան

1007  
7001  
2030996



Թ Ի Ճ Լ Ի Ս  
Ելեքարատպ. օր. Ն. Աղանեան Գլխ. 7.  
1912

24 JUL 2013

Handwritten text at the top of the right page, mostly illegible due to fading.

**Ա**յս գէպըը կատարուել է Օլիվէր Կրոմ-  
 վէյլի ժամանակ: Գնդապետ Մայֆարը, որ ժա-  
 մանակակից սպաներից ամենաերիտասարդն  
 էր, ընդամենը երեսուն տարեկան կը լինէր:  
 Չնայելով երիտասարդութեան, նա շատ հմուտ  
 էր և շատ անգամ փորձել էր իր ոյժը պա-  
 տերազմի ժամանակ: Նա մասնակցել էր շատ  
 արշաւանքների և բարձր պաշտօններ ստացել:  
 Բայց այժմ գնդապետին ճնշում էր մի վիշտ.  
 մի ստուեր էր ընկել նրա երջանկութեան վրայ:  
 Չմեռային մի երեկոյ էր. դուրսը խաւար  
 էր և շառաչում էր սառը քամին. սենեակում  
 տիրում էր մելամաղձոտ լուսթիւն: Գնդապետ  
 Մայֆարն ու իր նորատի կինը շատ էին խօսել  
 իրանց վշտի և սպառնացող աղէտի մասին: Նը-  
 րանք աւետարանից մի գլուխ կարդացին և ա-  
 ղօթեցին: Այժմ մնում էր միայն լուռ նայել  
 վառարանի մէջ այրուող կրակին, մտածել և  
 սպասել: Նրանք շատ լաւ գիտակցում էին, որ  
 երկար չէ տևելու այդ դրութիւնը և նորատի

ամուսինը ցնցւում էր, երբ յիշում էր այդ:

Նրանք ունէին մի եօթը տարեկան աղջիկ, Սբբի անունով, որին պաշտում էին երկուսն էլ: Այժմ նա պիտի գար համբուրելու և բարի գիշեր մաղթելու ծնողներին. և գնդապետը ասաց կնոջը. — մաքրիր արցունքներդ. մոռանանք ժամանակաւորապէս այն վիշտը, որ սպասում է մեզ. մենք պէտք է ցոյց տանք երեխային թէ երջանիկ ենք:

— Կաշխատեմ վշտի բոլոր ծանրութիւնը թագցնել սրտիս մէջ, եթէ միայն նա կարող է այդ տանել, պատասխանեց կինը:

— Յիշենք որ ամեն ինչ նա է կարգադրում. և ինչ որ նա է անում-բոլորն էլ մեր օգտի համար է:

— Թող լինի նրա կամքը: Ես խորին հաւատով եմ արտասանում այս խօսքերը. երանի թէ ամբողջ սրտով կարողանայի զգալ այն՝ ինչ որ ասում եմ: Բայց այն միտքը, թէ այս անգին ձեռքը, որ վերջին անգամ սեղմում եմ շրթունքներին...

— Հանդարտ, սիրելիս. Սբբին գալիս է:

Իռան մէջ երևաց մի փոքրիկ երեխայ. հրաշալի գանգուրներով, գիշերուայ շապիկը հագին ու վազեց հօր մօտ:

Գնդապետը ամուր գրկեց նրան և փոքրիկ սիրուն գլուխը ծածկեց անթիւ համբոյրներով:

— Հայրիկ, սպասիր. այդպէս ամուր մի համբուրի, մաղերս գզգզեցիր:

— Ա՛, ցաւում եմ որ այդպէս եղաւ: Կը ներե՞ս յանցանքս, սիրելիս:

— Իհարկէ, հայրիկ. ասան ճիշտ որ դղում ես արածիդ վրայ: —

— Իսկոյն կը համոզուես, Սբբի. ասաց զընդապետը և երեսը ձեռքով ծածկելով սկսեց սուտ լաց լինել: Երեխան վախեցաւ այդպիսի տխուր ընթացքից, ինքն էլ սկսեց լաց լինել և աշխատում էր հօր երեսից ձեռքը հեռացնել:

— Մի լար, հայրիկ. Սբբին էլ չի անի, երբէք չի անի:

Աշխատելով հեռացնել ձեռքը հօր դէմքից, յանկարծ մատների միջից փայլեց աչքը:

— Ուրեմն չէիր լաց լինում, հմ. վատ, չար հայրիկ. խաբեցիր ինձ. ես գնում եմ մայրիկի մօտ, նա աւելի լաւ գիտէ վարուել Սբբիի հետ:

Ասաց և ուղում էր ցած թռչել հօր գրկից. բայց գնդապետը ամուր սեղմեց նրան գրկում և ասաց.

— Չէ, Սբբի. մնա ինձ մօտ. հայրիկը վատ է, բայց նա խոստովանում է իր սխալը և զըղ-

Չուճ: Թոյլ տուր աշխիներդ համբոյրներով  
 չորացնել, հայրիկը ներողութիւն է խնդրում  
 և իբր պատիժ պատրաստ է անել ինչ որ Աբ-  
 բին ցանկանայ: Ահա այսպէս. այժմ աշխիները  
 էլ չեն լալիս, մազերդ էլ ուղղեցի. այժմ կա-  
 րող ես հրամայել:

Երեխայի դէմբը փայլեց ուրախութիւնից.  
 նա շոյեց հօր թշերը և բացահանչեց:

—Իբր պատիժ մի բան պէտք է պատմես:

—Այն ինչ է. քայլերի ձայներ են լսում:

Ծնողները շունչները իրանց քաշած ականջ են  
 դնում. իսկ հազիւ լսելի քայլերը աւելի և ա-  
 վելի լսելի են դառնում... բոլորովին մօտե-  
 ցան... որքան պարզ... անցան մօտից. կամաց  
 կամաց անհետացան... ծնողները թևթևու-  
 թեամբ շունչ քաշեցին և հայրն ասաց.

—Ուղիւճ ես պատմեմ: Ուրախ բան պատ-  
 մեմ:

—Ոչ, հայրիկ, ոչ. մի զարհուրելի բան պատ-  
 միր:

Հայրը աշխատում էր համոզել Աբբին, որ  
 ուրախ պատմութիւն լսելը աւելի լաւ է. բայց  
 երեխան պնդում էր թէ նա պէտք է խոս-  
 ւումը կատարի. իսկ հայրը խոստացել էր կա-  
 տարիւ աղջրկայ բոլոր ցանկութիւնները: Ինչ

էր կարող գնդապետը անել. որպէս իսկական  
 գինուոր, պէտք է իր խոստումը ճշտութեամբ  
 կատարէր:

—Ինչո՞ւ պէտք է միշտ ուրախ բան պատ-  
 մել, շարունակում էր Աբբին:

—Բէտտին ասում է՝ որ մարդիկ միշտ ու-  
 րախ կեանք չեն ունենում. ճշմարիտ է, հայ-  
 րիկ: Նա այդպէս է ասում:

—Այո, զստրիկս, ուղիղ է: Ամենքն էլ մի  
 վիշտ են ունենում: Առանց վշտի կեանք չը  
 կայ:

Ուրեմն դրա մասին մի բան պատմիր, մի  
 շատ զարհուրելի բան, այնպէս որ մենք ա-  
 մենքս էլ վախենանք. կարծես թէ այդ բոլորը  
 մեր մասին լինի: Մայրիկ, մօտ նստիր և վեր-  
 ցրու Աբբիի ձեռքը, որ աւելի հեշտ լինի տա-  
 նել երբ պատմութիւնը աւելի սարսափելի լի-  
 նի: Այժմ սկսիր, հայրիկ:

—Լաւ. ուրեմն լսիր: Երեք գնդապետներ  
 կային...

—Օ, ինչ հետաքրքիր է. ես լաւ գիտեմ թէ  
 ինչ է գնդապետ, որովհետև քեզ ճանաչում եմ:  
 Ես գիտեմ թէ ինչպէս են հազնւում նրանք:  
 Շարունակիր հայրիկ:

—Մի կռուի ժամանակ նրանք մեզանչե-

ցին, անցնելով «դիսցիպլին»-ի սահմանից:

Օտար բառը դուր եկաւ երեխային: Հետաքրքրութիւնից լայն բաց արած աչքերով նա լուրջ կերպով հարցրեց.

— Համայն է. կարելի՞ է ուտել: Ծնողները չկարողացան դապել ծիծաղը և հայրն ասաց.

— Չէ սիրելիս. դա բոլորովին ուրիշ բան է. նրանք անցան իրանց իրաւունքի սահմաններից:

— Իսկ այդ վատ է. այդ բանը...

— Ոչ, փոքրիկս, դա ուտելու չէ: Մի անյաջող և դժբաղդ կռուի ժամանակ նրանց հրամայուած էր, թշնամու ուշադրութիւնը գրաւելու համար, կեղծ յարձակում գործել մի բաւական լաւ ամրացրած բերդի վրայ, որպէսզի այդպիսով միջոց տրուի զինուորներին ազատ յետ նահանջել: Բայց նրանք այնպէս յափշտակուեցան, որ իսկական յարձակում գործեցին և միևնոյն ժամանակ յաղթեցին թշնամիներին:

Գլխաւոր հրամանատար զօրապետը չէր կարող չզովել նրանց քաջութիւնը, բայց նեղացած էր անհնազանդութեան համար և երեքին էլ ուղարկեց Լօնդօն դատելու: Դատարանը պէտք է վճռէր կեանքի՞ թէ մահուան էին արժանի նրանք:

— Մեծ զօրապետ Կրօմվելն է արել, հաշրիկ:

— Նա, փոքրիկս:

— Ես նրան տեսել եմ, երբ անցնում էր զինուորների հետ միասին մեր տան մօտով, նրա տեսքը այնպիսի... այնպիսի... ինքս էլ չզիտեմ թէ ինչպիսի է. բայց ինձ թւում է, թէ նա մի բանից անբաւական է և ամենքը վախենում են նրանից. իսկ ես չեմ վախենում, որովհետև ինձ այնպէս չէր նայում, ինչպէս ուրիշներին:

— Սիրելի շատախօս, սպասիր շարունակեմ: Այդպէս գնդապետներին գերիների նման տարան Լօնդօն և ազնիւ խօսք առնելով նրանցից, կարճ ժամանակով ազատ թողեցին, վերջին անգամ իրանց բարեկամներին հրաժեշտ տալու համար:

— Սա... դարձեալ քայլեր... Ամենքը ուշադրութեամբ սկսեցին ականջ դնել, այս անգամ էլ քայլերը լռեցին: Մայրը գլուխը դրեց ամուսնու ուսին դէմքի մեռելային գունատութիւնը ծածկելու համար:

— Նրանք հասան այսօր առաւօտ:

Երեխայի աչքերը լայն բացուեցին:

— Հայրիկ, իրողութիւնն է այդ բոլորը. հը-  
նարած չէ՞:

— Բոլորը ճիշտ է:

— Ահ, ինչ լաւ պատմութիւնն է. հայրիկ,  
շարունակիր. մայրիկ, լաց ես լինում:

— Ոչինչ, աղջիկս, էլ չեմ լաց լինում. մը-  
տածում էի այն դժբաղդ ընտանիքների մա-  
սին:

— Մի լաց լինի, մայրիկ. Ս.մեն ինչ լաւ  
վերջ կունենայ, ինչպէս սովորաբար լինում է  
հեքեաթներում: Այս րոպէիս հայրիկը կ'վեր-  
ջացնի պատմութիւնը, իսկ վերջը միշտ այս-  
պէս է լինում. «և ապրում էին նրանք երջա-  
նիկ մինչև խոր ծերութիւն». պատմիր շու-  
տով, հայրիկ:

— Ազատ թողնելուց առաջ, բանտարկեալ-  
ներին տարան Տօուէր:

— Ես գիտեմ որտեղ է գտնուում Տօուէրը.  
մեր բնակարանից երևում է:

— Այնտեղ ամբողջ ժամ դատում էին նը-  
րանց և մեղաւոր ճանաչելով՝ մահուան դատա-  
պարտեցին: Նրանց պէտք է գնդակահարեն:

— Գնդակահարեն:

— Օ, ինչ վատ է:

— Մի լաց լինի, մայրիկ, ամեն ինչ լաւ կը

վերջանայ. կ'տեսնես որ բոլորը կանցնի, իսկոյն  
հայրիկը կպատմէ վերջը և կ'տեսնես որ լաւ  
կ'լինի. Ինչ դանդաղ ես պատմում, հայրիկ,  
շուտ արա, հանգստացրու մայրիկին:

— Բայց պիտի յիշեմ թէ ինչպէս էր...

— Այդ երեք գնդապետները...

— Ճանաչում ես նրանց:

— Այո, ճանաչում եմ:

— Ինչպէս կուզենայի ես էլ ծանօթ լինել-  
որքան սիրում եմ բոլոր գնդապետներին: Ինչ  
ես կարծում, թոյլ կտային համբուրել նրանց:

— Մէկը անպատճառ, ինձ համբուրիր նրա  
փոխարէն: )

— Լաւ, ահա երկու համբոյր եւս միւս եր-  
կուսի համար, ես կասէի նրանց թէ իմ հայրս  
էլ գնդապետ է. նա էլ քաջ է, նա էլ նոյնը  
կանէր ինչ որ դուք. ուրեմն ձեր արածի մէջ  
ոչինչ վատ բան չի կարող լինել. ուրիշները  
ինչ ուզում են թող ասեն. ամենևին չպէտք է  
ձեր արածից ամաչէք, և այն ժամանակ նրանք  
թոյլ կտային ինձ համբուրել, չէ՞, հայրիկ:

— Սիրով:

— Մի լար, մայրիկ, իսկոյն կ'հասնի այն  
տեղին, ուր ամենքը դարձեալ երջանիկ կը լի-  
նին:



— Դատաւորներից ոմանք շատ տխուրէին  
 — նոյնիսկ ամենեքեան. խօսքս զինուորական  
 դատի մասին է: Նրանք գնացին, զօրապետի  
 մօտ և յայանեցին թէ իրանք իրանց պարտքը  
 կատարեցին (նրանց պարտքն էր, դատապար-  
 տել). իսկ այժմ խնդրում են գնդակահարեն  
 միայն մէկին և ազատ թողնեն միւս երկուսին:  
 Այդ էլ ասում էին միայն նրա համար որ օրի-  
 նակ տան զօրքին, թէ որ աստիճան պէտք է  
 պարտաճանաչ լինել: Բայց զօրապետը շատ  
 խիստ էր և մերժեց նրանց խնդիրը ասելով թէ  
 ինչպէս դատաւորները կատարեցին իրանց  
 պարտքը, այնպէս էլ ինքը, զօրապետը, պար-  
 տաւոր է իր պարտքը կատարել: Այստեղ դա-  
 տաւորները առարկեցին թէ երբէք չեն խնդրի  
 այնպիսի բան, ինչ որ իրանք չեն կատարի,  
 եթէ իրաւունք ունենան: Այս խօսքերը ազդե-  
 ցին զօրապետի վրայ, նա խորասուզուեց մտքե-  
 րի մէջ և դէմքի արտայայտութիւնը մեղմա-  
 ցաւ: Այնուհետև դատաւորներին հրամայեց մի  
 փոքր սպասել, իսկ ինքը առանձնացաւ իւր սե-  
 նեակը և սկսեց աղօթել, որպէսզի Աստուած  
 օգնի իրեն լուծելու այդ ծանր հարցը: Երբ վե-  
 րադարձաւ՝ ասաց.

— Վիճակ ձգեցէք. մէկը թող մեռնի, եր-  
 կուսը ապրեն:

— Հանեցի՞ն վիճակը, հայրիկ, և ո՞րը  
 պէտք է մեռնի: Խեղճ գնդապետ:

— Ոչ, նրանք հրաժարուեցան այդ բանից:

— Չեն ուզո՞ւմ:

— Չէ:

— Ինչո՞ւ:

— Ասում են, թէ ում վիճակ ընկնի, ինքը  
 վերջ կը տայ իր կեանքին. իսկ այդ ոչ այլ ինչ  
 է, եթէ ~~այ~~ անձնասպանութիւն: Երեքն էլ երի-  
 տասարդներ են. աւետարանում արգելուած է  
 անձնասպանութիւն գործելը: Ահա այս պա-  
 տասխանը ուղարկեցին դատապարտեալները  
 զօրապետին և աւելացրին, թէ իրանք պատ-  
 րաստ են, թող կատարուի դատաւորների վի-  
 ճիւղը:

— Ի՞նչ է նշանակում այդ, հայրիկ:

— Որ նրանց... որ նրանց երեքին էլ կը  
 գնդակահարեն. այս ի՞նչ է, քամի՞ է, չէ՞, թը-  
 րը իսկ, թրը իսկ:

— Զօրապետի անուշով հրամայում ենք  
 բաց արէք:

— Հայրիկ, զինուորներ են, նայիր. շատ եմ

սիրում գինուորներին. ես բաց անեմ դուռը,  
կարելի՞ է: Թոյլ տուր, հայրիկ, թոյլ տուր:

Աբբին ցած թռաւ հօր ծնկներէց, դուռը  
բաց արեց և ուրախ ուրախ ազազակեց:

— Եկէք, եկէք, Աբբին թողնում է. հայրիկ,  
տես գնդաձիգ գինուորներ են. ես լաւ եմ ճա-  
նաչում գնդաձիգ գինուորներին:

Մի խումբ գինուորներ հրացանները ուսին  
ներս մտան և կարգով շարուեցին: Նրանց ա-  
ռաջնորդող սպան տուեց պաշտօնական բարեր:  
Գնդապետը վեր կացաւ և բարևեց. նրա կինը,  
թէպէտ գունատ և տանջուած, կանգնեց ա-  
մուսնու կողքին, սակայն նրա աչքերում վե-  
րին աստիճանի յուսահատութիւն էր կարգաց-  
ւում:

Գնդապետը լուռ և շերմագին գրկեց կնո-  
ջը և Աբբին. հետևեց հրաման «դէպի Տօուէր,  
մարշ»: Գնդապետը հաստատ քայլերով և զի-  
նուորականին յատուկ շարժուածքով քայլեց իր  
տան շէմքից. նրան հետևեցին սպան և զինուոր-  
ները: Դուռը փակուեց ետևից:

— Մայրիկ, ինչ լաւ էր այս ամենը, չէ՞:  
Իսկ հեքիաթի համար ես քեզ ասում էի, որ  
ամեն բան լաւ կը վերջանայ: Այժմ հայրիկը

կերթայ Տօուէր և կը տեսնի այն գնդապետ-  
ներին: Նա...

— Այստեղ արի, ինձ մօտ, իմ խղճուկ, ան-  
բաղդ, անմեղ մանկիկս:

Հետևեալ օրը, մայրը չկարողանալով տանել  
իրան հասած դժբաղդութիւնը, չկարողացաւ  
վեր կենալ անկողնից: Բժիշկները և գլխութեան  
քոյրերը նստած էին նրա մահճակալի մօտ և  
ժամանակ առժամանակ մտազբաղ շնչում  
էին միմեանց հետ: Աբբին չէին թողնում  
հիւանդի մօտ և ուղարկեցին փողոցը խա-  
ղալու: Փաթաթուած ձմեռուայ տաք զգես-  
տի մէջ նա դուրս գնաց և խաղաց մի առ  
ժամանակ: Յանկաբժ մտքովն անցաւ որ մայ-  
րը հիւանդ է, իսկ հայրը դեռ չէ վերագարձել  
Տօուէրից: Պէտք է գնալ, մտածեց նա, և տես-  
նել թէ ինչո՞ւ է հայրը այդքան ուշանում:

Մի ժամ անց կրօմվելի մօտ հաւաքուեց  
զինուորական դատը: Մռայլ և անմերձենալի  
կանգնած էր զօրապետը սեղանի մօտ: Նա  
ձեռքով նշան արեց, որ դատը սկսուի:

— Մենք թախանձանքով խնդրում ենք  
ձեզ մի անգամ ևս քննել այդ գործը. ազաչում  
ենք, բայց դուք մնում էք հաստատ Ձեր խօս-  
քին: Դուք պահանջում էք որ վիճակ հանեն.

այս կարգի պէս,

բայց նրանք երեքն էլ պատրաստ են մեռնելու և իրանց կրօնի պահանջներին չեն անցնիլ:

Զօրապետը մռայլ և լուռ նայում էր սեղանին: Երկար կանգնած էր նա այդպէս մտախոհ ու վերջապէս ասաց:

—Սմենքը չպէտքէ մեռնեն. կը մեռնի նա՛ ում կընկնի վիճակը:

Ներկայ եղողները այդ վճիռը լսեցին զոհունակութեամբ:

—Բերէք այստեղ, այս սենեակը կանգնացրէք շարքով, երեսները դէպի պատը, ձեռքերը մէջքներին խաչած: Երբ պատրաստ լինի, յայտնեցէք ինձ:

Երբ կրօմվէյլը մենակ մնաց, նստեց բազկաթոռին և ասաց իր թիկնաւահին.

—Բերէք այստեղ փողոցից առաջին պատահած երեխային:

Սպան դուրս գնաց և իսկոյն վերադարձաւ, բերելով Աբբիին. նրա վերարկուն ամբողջովին ծածկուած էր ձիւնով: Սռանց բաշուելու երեխան մօտեցաւ տէրութեան գլխաւորին, որի անունը սարսափ էր ազդում նոյն իսկ թագաւորներին, բարձրացաւ նրա ծնկան վրայ և ասաց.

—Ես քեզ ճանաչում եմ. դու գլխաւոր

հրամանատար զօրապետն ես: Ես քեզ տեսել եմ, երբ մի անգամ անցնում էիր մեր տան մօտով: Սմենքը վախենում էին քեզանից, իսկ ես ոչ, որովհետև ինձ այնքան բարկացած չէիր նայում: Միտդ է, կարմիր զգեստ ունէի հագած... չէս յիշում:

Զօրապետի դաժան դէմքի վրայ մի ժպիտ երևաց. նա խուսափում էր ճիշտ պատասխանից:

—Սպասիր փոքր ինչ մտածեմ. այդ էր...

—Կանգնած էի տան առաջ, մեր տան առաջ. գիտե՞ս:

—Հմ, սիրելի, հրաշալի փոքրիկս. թէև դատաւարտելի է, բայց խոստովանում եմ որ չեմ յիշում, ճշմարիտ...

Երեխան յանդիմանութեամբ կտրեց նրա խօսքը:

—Տեսնո՞ւմ ես ինչպիսին ես, մոռացար, իսկ ես յիշում եմ:

—Ճշմարիտ, ամաչում եմ. բայց սրանից յետոյ, հաւատա ինձ, երբէք չեմ մոռանայ քեզ. ազնիւ խօսք եմ տալիս: Իսկ դու ներքի ինձ և այսուհետև լաւ բարեկամներ լինենք, համաձայն ես:

—Իհարկէ. թէպէտ ես դարձեալ չեմ հասկանում թէ ինչպէս կարողացար ինձ մոռանալ:

Երևի շատ մոռացկոտն ես: Երբեմն ինձ հետ էլ է պատահում: Այնուամենայնիւ ներում եմ քեզ. դու լաւն ես, ինչպէս... Աւելի յարմար նստեցրու ծնկներիդ վրայ, ինչպէս հայրիկս է անում... մրսում եմ...

—Մօտեցիր ինձ, փոքրիկս. այժմ մենք բարեկամներ ենք, չէ՞. դու յիշեցնում ես ինձ իմ փոքրիկ աղջկաս. այժմ նա մեծ է. բայց մի ժամանակ նա էլ քեզ պէս փոքրիկ և հրապուրիչ երեխայ էր: Քո սիրուն վստահութիւնով կարող ես ամենքին ստրուկդ դարձնել, լինի նա բարեկամ, թէ թշնամի: Երբեմն աղջիկս էլ սեղմում էր ինձ, ցրուելով հոգսերս և խաղաղութիւն սփռելով հոգուս մէջ: Այժմ դու էլ նոյնն ես անում: Բաւական միջոց է անցել և ժամանակը ամպերով ծածկել է այդ երջանիկ անցեալը: Այժմ դու վերադարձրիր ինձ այդ երջանկութիւնը: Աստուած օրհնէ քեզ, սիրելիս: Գոնէ ժամանակաւորապէս ստիպեցիր ինձ յոգնածիս և չարչարուածիս՝ մոռանալու Անգլիայի համար կրած տանջանքների ծանրութիւնը: Քեզանով վերջապէս հանգստանում եմ:

—Իսկ նրան շատ, շատ ես սիրում:

—Թող ապացոյց լինի այն՝ որ նրա հրա-

մանը կատարել եմ ամենայն ճշտութեամբ: Նա հրամայում էր—ես հնազանդում էի:

—Ի՞նչ լաւ ես: Ուղո՞ւմ ես ինձ համբուրել:

—Սիրով. ես նոյնիսկ հպարտանում եմ քո թոյլտուութեամբ: Ահա, այս քեզ համար, այս էլ նրա համար: Այժմ դու փոխարինում ես նրան և կարող ես հրամայել. իսկ ես կը կատարեմ հրամաններդ, ինչպէս անում էի նրա համար:

Աբբին ծափ տուեց հրճուանքից. բայց յանկարծ կանգ առաւ և սկսեց ահանջ դնել. հարևան սենեակից լսում էին զինուորների համաչափ քայլերի ձայները:

—Զինուորներ, ահա զինուորներ. Աբբին կուզենար տեսնել նրանց:

—Կըտեսնես, փոքրիկ. միայն մի քիչ սպասիր, բան ունիմ քեզ յանձնարարելու:

Մտաւ սպան, բարևեց և յայտնեց, որ դատապարտուածները պատրաստ կանգնած են իրանց տեղերը: Զօրապետը տուեց Աբբին երեք հատ զմուռէ գնդիկներ, երկուսը սպիտակ, մինը կարմիր. վերջինը մահուան էր դատապարտում նրան, ում որ վիճակ ընկնէր:

—Ա՛խ, ինչ գեղեցիկ է այս կարմիր գընդակը, ի՞նձ համար է:

—Չէ, սիրելիս, ուրիշների համար է. այս վարագոյրի ետևի դուռը բաց է, գնա այն սենեակը. այնտեղ կը տեսնես երեք մարդ, նրանք կանգնած են կարգով, երեսները պատի կողմը, ձեռքերը մէջքին, ահա այսպէս...

Նրանց մի ձեռքը բաց է, կարծես ողորմութիւն են խնդրում. ամեն մէկ ձեռքում դիր այս գնդակներից մէկը, իսկ յետոյ շուտով արի ինձ մօտ:

Աբբին անհետացաւ վարագոյրի ետևը. գօրապետը մնաց մենակ, խորը շունչ քաշեց և մտածեց.—Այս միտքը երևի Աստուած ուղարկեց ինձ. ես շուարած էի, չը գիտէի ինչ անել. Նա միշտ օգնում է իրանից օգնութիւն խընդրողներին, գիտէ թէ ումն է ընկնելու վիճակը և կը կատարէ այդ անմեղ, գեղեցիկ մանկան ձեռքով: Թող լինի Նրա կամքը. մենք մահկանացուներս կարող ենք սխալուել, իսկ Նա՛ ոչ. իմաստուն են Նրա գործերը, անթափանցելի Նրա իմաստութիւնը. օրհնուած է Նրա անունը:

Մտնելով հարևան սենեակը, Աբբին հետաքրքրութեամբ դիտեց զինուորներին և երեք դատապարտեալներին:

Յանկարծ նրա դէմքը փայլեց, նա մտածեց.—սրանցից մէկը հայրիկս է, ո՞ն ետևիցն էլ լաւ եմ ճանաչում. նրան կը տամ ամենից գեղեցիկը: Ուրախ ուրախ մօտեցաւ նրանց և գնդակները դարսեց բաց ձեռների մէջ. յետոյ մօտեցաւ հօրը և երջանիկ ժպիտով ասաց.

—Հայրիկ, հայրիկ, տես ինչ ունես. ես տուեցի քեզ:

Գնդապետը նայեց ձեռքին. նրա ծնկները թուլացան և դէմքը սարսափելի կերպով գունատուեց. բայց մեծ ոյժ գործ դնելով, ուշքը ժողովեց և ամուր գրկեց ու սեղմեց կրծքին նրան, ով մահուան դատապարտեց իրան: Անսահման սէրը և խորին վիշտը ալեկոծում էին նրա սէրը:

Զինուորները, սպաները և ներուած զինդապետները մնացել էին սառած իրանց աչքի առաջ կատարուած անցքի ազդեցութիւնից: Վիշտը այնպէս ցնցեց նրանց, որ բոլորի աչքերը արտասուքով լցուեցան: Գերեզմանական լռութիւն տիրեց մի քանի րոպէ. վերջապէս հերթապահ սպան անպատմելի ջանքով ստիպելով իրան կատարել իր պարտականութիւնը, մօտեցաւ դատապարտեալին, ձեռքը դրեց նրա ուսին և կամաց ասաց.

— Ինչքան էլ ծանր է ինձ համար, պարոն,  
բայց պարտքը ստիպում է...

— Ինչ է ստիպում. հարցրեց Աբբին:

— Պէտք է տանեմ նրան...

— Տանեմ... ո՞րտեղ...

— Ը... Ը... Աստուած, օգնիր ինձ: Բերդի  
միւս մասը:

— Բայց այժմ չի կարելի. մայրիկս հիւանդ  
է և ես եկայ սրան տուն տանեմ:

Նա իր փոքրիկ ձեռքերով ամուր փաթա-  
թուեց հօր վզին:

— Հայրիկ, գնանք շուտով:

— Սիրելի աղջիկս, չեմ կարող, պէտք է գը-  
նամ սպայի հետ:

Աբբին ցած թուաւ հօր գրկից և զարմա-  
ցած իր շուրջը նայեց. յետոյ վազելով մօտե-  
ցաւ սպային, ոտները գետնին խփեց և բար-  
կացած բացականչեց.

— Ես ասացի կարծեմ, որ մայրս հիւանդ  
է. լսեցի՞ր. հայրիկս պէտք է գնայ նրա մօտ,  
թող նրան. պէտք է թողնես:

— Խեղճ աղջիկ. փառք կը տայի Աստծուն,  
եթէ միայն կարողանայի կատարել կամբողջ  
բայց չեմ կարող. պէտք է գայ ինձ հետ:

Կայծակի արագութեամբ փոքրիկ Աբբին

դուրս վազեց սենեակից և իսկոյն վերադարձաւ  
իր հետ քաշ տալով զօրապետին:

Զօրապետի երևալուն պէս ամենքը կանգ-  
նեցին և սպաները բարևեցին:

— Հրամայիր սրանց. մայրիկս հիւանդ է,  
հայրիկս պէտք է նրան: Ես սրանց էլ ասացի  
այդ, բայց չեն ուզում լսել, հայրիկիս տանում  
են:

Զօրապետը մնաց սառած կայծակնահարի  
նման:

— Հօրդ, սիրունիկս. հայրիկդ է սա՛:

— Իհարկէ. դա միշտ էլ իմ հայրս է եղել.  
դրա համար էլ դրան տուեցի գեղեցիկ կարմիր  
գնդակը: Աշխարհիս երեսին ամենից շատ դրան  
եմ սիրում:

Զօրապետը դառը վշտացած էր և հառաչե-  
լով ասաց.

— Ներիր ինձ, Տէր. երևի սատանան էր ա-  
ռաջնորդում ինձ, երբ աշխարհիս երեսին ա-  
մենասարսափելի բանն էի կատարում. այժմ  
ինչ եմ կարող և ինչ պիտի անեմ:

Աբբին անհամբերութեամբ և զայրացած  
ձայնեց.

— Պէտք է հրամայես, որ ազատ թողնեն  
հայրիկիս. դու կարող ես անել այդ. և յանկարծ

լաց եղաւ: Ինչո՞ւ չես հրամայում. չէ՞ որ խոստացար կատարել բոլոր ցանկութիւններս. իսկ ահա՛ առաջին խնդիրս և չես կատարում խոստումդ:

Ծեր զինուորականի դաժան կերպարանքը մեղմացաւ. նա ձեռքը դրեց փոքրիկ բռնակալի գլխին ու ասաց.

—Շնորհակալ եղիր Աստուծոց. այդ չը նախատեսուած խոստումը պատահական փրկիչ է ներկայանում այժմ: Օրհնուած եղիր որ Նրա կամքով յիշեցրիր ինձ խոստումս: Աստուած էր ղեկավարում քեզ, փոքրիկս: Պահապաններ, կատարեցէք սրա հրամանը:

—Գնդապետ Մայֆարը ներուած է. նա ազատ է:



1165-1166

*Handwritten scribble*

« Ազգային գրադարան  
  
NL0390171



1131

ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ  
ՏԵՍԵԼ

1. ՍԷ հացեր, Ան. Ֆրանսի . . . . .	5 կ.
2. Ապուշը Ժ. Էսպարբի . . . . .	5 կ.
3. Գթութիւն. Ժ. Լըմեարի . . . . .	5 կ.
4. Ուղեղի նորոգումը, Ֆ. Դիկմէլլի . . . . .	5 կ.
5. Խէրիբի, Ե. Սպիրի . . . . .	15 կ.
6. Վիճակ Թարկ Տվէնի . . . . .	10 կ.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

825  
S-90